


ԵՐԿՈՒ ՏԵՍԼԱՊԱՇՏ ՀԱՅԵՐ

Posted on December 3, 2022 by Keghart



Category: [Editorials](#)



Ժիրայր Դանիելեան եւ Մարգալետ Մարկոսեան**Դոկտ. Մինաս Գոճայեան, Լոս Անճելըս, 2 Դեկտեմբեր 2022**

Տարբեր տերեւաթափ մը ունեցանք այս աշնան. մրգաստանի նման մեր պարտեզէն բաժնուեցան երկու հաստաբուն ծառեր: Երկուքն ալ գրի ու գրականութեան մարդ, երկուքն ալ նոյն դպրոցէն շրջանաւարտ, նոյն ուսուցիչներու շուքին տակ հասակ առած, նոյն քաղաքէն, հայ դպրոցին սպասարկած տնօրէններ, նոյն երազներով ու տեսլականով՝ Ժիրայր Դանիելեան եւ Մարգալետ Մարկոսեան:

Սիրտէ սիրտ եւ հոգիէ հոգի այնքան մօտիկ ըլլալով՝ անոնք իրենց աչքերը կը փակէին ԱՄՆ-ի հակառակ ափերուն վրայ՝ 10 օրուայ տարբերութեամբ, շրջապատուած հարազատներով ու սիրելիներով: Երկուքն ալ խոր բաց մը կը թողէին հայ կեանքէն ներս: Ու կը ծագի դաժան հարցումը՝ ո՞վ պիտի գայ լեցնելու այդ պարապուրթինը...: Ցաւօք սրտի վերջին տասնամեակներու մեր դառն փորձառութիւնները յոյս չեն ներշնչեր այս ուղղութեամբ:

Երկուքն ալ թրծուեցան 1950-ականներու վերջը եւ 60-ականներու սկիզբը ու թէեւ ունէին ասպարեզային տարբեր նախընտրութիւններ, սակայն օրերը կը պահանջէին նոր փնտռողներ, ճշմարտութեան հասնելու նոր ուղիներ, եւ երկուքն ալ կը մտնէին նոյն ճամբուն մէջ: Արդարեւ, սերունդ մը հասակ առած էր յետ 2-րդ պատերազմեան շրջանին, երբ պաղ պատերազմը անելի բեւեռացուցեր էր երկրագունդը՝ կամ այս կողմ, կամ միւս կողմ, կամ մեզի հետ ես, կամ մեր հակառակորդն ես: Այդ պայմաններուն աշխարհի տարբեր մայրաքաղաքներու մէջ գտնուեցան մարդիկ, անելի ճիշտ՝ մտաւորականներ, մշակոյթի գործիչներ եւ նոյնիսկ քաղաքագետներ, որոնք այլ ուղղութիւն մը ցոյց կու տային, ուղղութիւն մը, որ անհեռանկար միջին ճամբայ մը չէր, այլ տրամաբանութեան, անկեղծութեան եւ փոխհասկացողութեան տարբերակն էր:

Այսպէս՝ կրնայիր դեմ ըլլալ ԽՍՀՄ-ին կամ Արեւմուտքին, բայց երկուքին մէջ ալ կային ուսանելի եւ մարդկայնական երեւոյթներ: Կրնայիր Դաշնակցական կամ ոչ-դաշնակցական ըլլալ, բայց պէտք էր գիտակցիլ թէ երկու կողմերն ալ ունէին դրական եւ բացասական կողմեր: Այդ տարիներուն կը ձեւաւորուէր ճշմարտութեան հետամուտ երիտասարդ ուսանողներու խումբ մը, որ կը փորձեր վեր բարձրանալ «կամ, կամ»երէն: Այս խումբին, անելի ճիշդը՝ այս հոյլին կը պատկանէին ի շարս այլոց Ժիրայրն ու Մարգալետը: Առաջինը կ'ըմբոստանար «յառաջդիմական» ճակատ յորջորջուած դեկավարութեան մը դեմ, որ կը ճգներ Կրեմլինի շահերուն հաւատարիմ մնալ որպէս արդարութեան, հաւասարութեան եւ համաշխարհային խաղաղութեան հասնելու միակ ուղի: Մարգալետ իր հերթին կ'ընդդիմանար քաղքենիութեան, յարմարուողականութեան եւ ազգային-քաղաքական «կուռքերու» դեմ:

Այսքանը ըսելէն ետք չեմ կրնար չանդրադառնալ վաթսուականներու սկիզբի [«հրաշալի ութնեակին»](#) մասին: Տարեկից աշակերտներէս շատերուն համար նոր ձայն մը կու գար

անոնց աշխարհին: Լոգոնգներ եւ «կամ, կամ»-ը չկային անոնց բառապաշարին մէջ: Համոզիչ էին անոնց քննադատութիւններն ու պահանջները, որոնք կը խարսխուէին ազգային համընդհանուր շահերու վրայ, արդարամտութիւնն ու ժողովրդավարութիւնը իրենց հաւատամքն էին: Անոնք հեռու էին անհատները հերոսացնելու փորձութենէն: Կային իրականութիւններ, որոնց քովէն կարելի չէր անտարբեր անցնիլ, ինչպէս պահանջատիրութիւն, մեզ շրջապատող արաբական աշխարհի ժողովուրդներու շահերու պաշտպանութիւն եւ համակրանք՝ Պաղեստինցի ժողովուրդի արդար պահանջներու հանդէպ:

Այս «հրաշալի ութնեակի» արդիւնքն եմ նաեւ ես, որ իր ամբողջ հետագայ կեանքը նուիրեց առողջ նոր սերունդներ դաստիարակելու գործին: Այս խմբակէն ծնաւ յետ-յիսնամեակի նոր թերթի մը ծնունդի գաղափարը, եւ այսպէս, 1969-ին Պէյրութի մէջ լոյսին եկաւ, աւելի ճիշդ՝ պայթեցաւ «Երիտասարդ Հայ»ը (1969-1975), որ եկաւ լրացնելու Անդրանիկ Ծառուկեանի «Նայիրի»-ն, Սիմոն Սիմոնեանի «Սփիւռք»ը: Այս հրատարակութիւնները եղան ազատ խօսքի եւ անկուսակցական, բայց ոչ մեղկ չէզոքներու խօսնակները: Սխալ չհասկցուիմ, այս «ութնեակը» դասական կուսակցութիւնները չէր պահարակեր ու այպաներ, այլ՝ իրաւունք կը վերապահեր «թացին թաց ըսելու, չորին՝ չոր»:

Ժիրայր Դանիելեան իր գործունեութեան դաշտ եւ ասպարեզ ընտրած էր մատենագիտութիւնը ամենէն լայն առումով: Հայկազեան գոլէճը (հիմա համալսարան) իր ամբողջն էր, ուր գործակից ունենալով ուրիշ երախտաւոր մը՝ Դոկտ. Երուանդ Քասունին, մէկը միւսին ետեւէն բանասիրական եւ հայագիտական աշխարհին կը հրամցնէին «Հայկազեան Հայագիտական Հանդէս»ի (ՀՀՀ) իրար յաջորդող յաջող թիւերը (տողերուս հեղինակը նոյնպէս իր բանասիրական ուսումնասիրութիւնները կը հրատարակէր ՀՀՀ-ի մէջ):

Մարգպետ Մարկոսեան ասպարեզով գիտնական ու գիտաշխատող ըլլալով, մեր հասարակութեան մէջ անուն մը դարձաւ որպէս գիր ու գրականութեան մարդ եւ հրապարակախօս՝ անթերի արեւմտահայերէնով եւ պատկերաւոր լեզուով, վկայ՝ իր հրատարակութիւնները: Ծատերու համար «միւս կողմի» մարդ նկատուող Մարգպետի հրապարակագրական թէ գրական գործերը լրջութեամբ կ'ընդունուէին, որովհետեւ կուսակցական աժան հռետորաբանութենէ եւ ինքնահիացածութենէ հեռու էին անոնք: Հետաքրքրական, գուցէ եւ ոմանց համար անհասկնալի էր Մարգպետ Մարկոսեանի ՀՅԴ-ի շարքերը անցնիլը, երբ 1980-1988 թուականներուն կը գործակցէր ԱՄՆ-ի Արեւելեան Թեմի առաջնորդ (Նիւ Եորք, Էջմիածնական), հետագային Երուսաղէմի Պատրիարք Թորգոմ Արք. Մանուկեանի հետ, որպէս Առաջնորդարանի մշակութային ձեռնարկներու վարիչ: Կարելի է միայն ենթադրել թէ ան խանդավառուած էր կամ յոյսեր էր կապեր ՀՅԴ-ի առաջնորդ Հրայր Մարուխեանի դէպի Հայաստան հակուելէն ետք:

Արդարեւ, Մարգպետ Մարկոսեան անդամ ըլլալով ամերիկեան ու միջազգային շարք մը

Կենսաբանական ու կենսաբնագիտական ընկերակցություններու, այդ հանգամանքով
ալ կը հրաւիրուէր վերանկախացած Հայաստան: Խանդավառ էր, որ նոր բաւիղներ կը
բացուէին մտաւորական գրող եւ գիտնական Մարգալետի եւ իր նմաններու առջեւ:

Ժիրայր Դանիելեան իր կարգին, ՀԲԸՄ-ի «[Խօսնակ](#)»ի, «[Շիրակ](#)»ի (1990-1997) եւ հոսկ
ապա «Կամար»ի հիմնադիր եւ պատասխանատու խմբագիր ըլլալով, միաժամանակ
ստանձնելով նաեւ ՀԲԸՄ-ի ամենէն հռչակուած վարժարաններէն մէկուն
տնօրէնութիւնը, զոր յաջողապէս կատարեց Լիբանանի քաղաքացիական պատերազմի
պատճառով ստեղծուած աննպաստ պայմաններուն, որոշ անհասկացողութիւններու
հետեւանքով կը դադրէր իր պաշտօնէն եւ կը յայտնուէր Անթիլիասի Կաթողիկոսութեան
մէջ, որպէս «Հասկ հայագիտական տարեգիրք»ի խմբագիր եւ ձեռնհաս վարիչը Մեծի
Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Հայագիտական հիմնարկի: Մշակոյթի մարդն էր
Ժիրայր, որ իր բազմակողմանի հմտութիւնները ի գործ դնելու համար պէտք ուներ
պարարտ հողի:

Յարգանք վայելող հայ վարժարաններու տնօրէններ եղան երկուքն ալ, որոնց կը
սպասէին նոր մարտահրաւերներ՝ համահունչ ընթանալ ժամանակի կրթական
պահանջներուն եւ գործադրել պետական ծրագիրներ, մտածել նիւթական աղբիւրներու
մասին եւ, որ ամենէն մտալկիչն էր՝ դիմանալ քաղաքական-կուսակցական
մենատիրական քմայքներու: Ժիրայր Դանիելեան ՀԲԸՄ-ի Յովակիմեան-Դարուհիի
տնօրէնն էր, Պէյրութ, Մարգալետ Մարկոսեանը՝ Լոս Անճելըսի մէջ հիմնուած առաջին
հայ վարժարանին՝ Սրբոց Նահատակաց Ֆերահեան ազգային վարժարանի:

Փառք ու պատիւ մեր երկու տեսլապաշտներուն, առանց որոնց սփիւռքը շատ բան
կորսնցուցած պիտի ըլլար:

Comments



Անահիտ Արփեն – 2022-12-06 05:11:03

Ես Երևանի մեջ, Հայաստանի գրողների տանը, տարիներ առաջ եմ հանդիպել ժիրայր Դանիելյանին: Անկեղծ ցավակցություններս եմ հայտնում թե՛ ժիրայրի և թե՛ Մարգարետի համար: Աստված երկուսին էլ լույսերի մեջ պահի: